«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«Արցախյան հակամարտություն» թեմայի ուսուցման բովանդակային առանձնահատկությունները
ԱՌԱՐԿԱ	Հասարակագիտություն
ՀԵՂԻՆԱԿ	Նատալյա Մելիքսեթյան
ՂԵԿԱՎԱՐ	Գագիկ Էմինյան
ՄԱՐԶ	Լոռի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Թեղուտի միջնակարգ դպրոց

Ալավերդի-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3
Հիմնական մաս---------- 5
Եզրակացություն ---------- ----------16
Գրականության ցանկ---------- ---------- 17

Ներածություն

Թեմայի արդիականությունը:Ժամանակն իր պահանջներն է առաջադրում ժամանակակից կրթական համակարգին: Ուսուցչի առջև տարբեր մարտահրավերներ են ծառանում.ինչ սովորեցնել, ինչու սովորեցնել, ինչպես սովորեցնել, ինչ միջոցներով բարձրացնել սովորողների մոտիվացիան:

Այս համատեքստում շատ կարևոր է հասարակագիտական առարկաների նշանակությունը:«Հասարակագիտություն» առարկայի ճիշտ դասավանդման արդյունքում հասարակությունը կունենա համամարդկային արժեքների կրող, ժողովրդավարական և կայուն արժեհամակարգով ակտիվ և պատասխանատու անհատ:

Ապագա քաղաքացին կկարողանա կերտել իր ազգի ձևավորման և զարգացման պատմական ուղին, քաղաքացու դիրքից կարժևորի Հայաստանի Հանրապետությունը որպես իր ներկան և ապագան կերտելու միջավայր:

Կկարողանա վերլուծել Հայաստանի Հանրապետության արդի հիմնախնդիրները և մարտահրավերները տեղական, տարածաշրջանային և գլոբալ համատեքստում, կարձագանքի դրանց որպես իրազեկ, պատասխանատու և հայրենասեր քաղաքացի:

Առարկայի դասավանդման ընթացքում անհրաժեշտ է, բացի գիտելիքների ու հասկացությունների յուրացումը, մեծ ուշադրություն դարձնել հետազոտական ուսուցմանը, ինչը հնարավորություն կտա հասկանալ, որ բազմաթիվ խնդիրներ չունեն միանշանակ լուծումներ և անխուսափելի են մշտական որոնումները:

Կարևոր նշանակություն ունի նաև նախագծային ուսուցումը, ինչը նպատակ ունի զարգացնել թիմային աշխատանքի հմտություններ, առաջարկել խնդիրների լուծման այլընտրանքային տարբերակներ:

Շատ կարևոր է դասավանդման ընթացքում զարգացնել սովորողների վերլուծական կարողությունները: Մի բան է ծանոթ լինել պատմական փաստերին, շարադրանքին, բոլորովին այլ բան է վերլուծել այդ փաստերը, բացատրել թե ինչու են իրադարձությունները զարգացել հենց այդ կերպ և, որ ամենակարևորն է, խուսափել անցյալի սխալները կրկնելուց:

Դասավանդման ժամանակ կարևոր է միջառարկայական կապերի ապահովումը: Ուսումնասիրվող թեման սերտորեն կապված է «Հայոց պատմություն» առարկայի հետ: Եթե

աշակերտը տեղյակ է պատմական իրադարձություններին, պատկերացնում է ժամանակաշրջանը, ապա հեշտությամբ կկարողանա եզրակացություններ ու մտահանգումներ կատարել: Կունենա սեփական կարծիք ու դիրքորոշում:

Այսօր մեր խնդիրն է դաստիարակել սերունդ, որն ունի աշխարհայացք, քննադատական մտածողություն, կարողանում է նկատել, վերհանել իրական կյանքում գոյություն ունեցող խնդիրները:

Տարածքային հակամարտությունները մեր օրերում սպառնալիք են Երկիր մոլորակի համար: Ցանկացած միջազգային կոնֆլիկտ դիվանագիտական ճանապարհով չկարգավորվելու դեպքում միտված է վերածվել սոցիալական չարիքի՝ պատերազմի:

Առաջնահերթ է կարևորել սովորողների մոտեցումները հակամարտությունների լուծման ուղիներին:Ապագա քաղաքացին պետք է հստակ գիտակցի իր ազգի շահն ու անվտանգությունը:Պետք է կոնֆլիկտները ուսումնասիրել միջազգային իրավունքի տեսանկյունից, վերլուծել այդ հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում և գլոբալ խնդրի համատեքստում: Քաղաքագիտության հիմնական մեկնաբանման արդյունքում պատկերացնել միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության դերը, քաղաքական երկխոսությունների նշանակությունն ու կարևորությունը:

Նպատակը. ուսումնասիրել Արցախյան հիմնախնդրի պատմությունը և վերլուծել հակամարտության պատճառները միջազգային իրավունքի տեսանկյունից:

Խնդիրները:

● Ուսումնասիրել արցախյան հակամարտության վերաբերյալ գրականությունը:

● Ուսումնասիրել հիմնախնդրի պատմությունը նախախորհրդային և խորհրդային տարիներին:

● Անդրադառնալ հակամարտության ակտիվ փուլին և ԽՍՀՄ-ի փլուզմանը:

●Հակամարտությունը ուսումնասիրել միջազգային իրավունքի տեսանկյունից:

Պատմական ակնարկ

Պատմական Արցախը գտնվում է Հայկական Լեռնաշխարհի հյուսիս –արևելքում: Ըստ «Աշխարհացույցի» Արցախը եղել է Մեծ Հայքի 10–րդ նահանգը կամ ինչպես Շիրակացին է գրում աշխարհը: Տարածքը կազմել է 15.200 կմ քառակուսի, որն էլ բաժանվել է 12 գավառի: «Ղարաբաղ» անվանումը հիշատակվել է ավելի ուշ՝ 14-րդ դարի պատմական սկզմնաղբյուրներում:

Լեռնային Ղարաբաղի (Արցախի) մասին՝ որպես պատմական Հայաստանի մաս, հիշատակումներ կան թե՛ հայկական աղբյուրներում, թե՛ օտարագիր: Դեռևս Ստրաբոնը, Պլինիոս Ավագը, Կլավդիոս Պտղոմեասը, Պլուտարքոսը,Դիոն Կասիոսը և այլ անտիկ հեղինակներ իրենց աշխատություններում հիշատակում են այդ փաստը: Մինչդեռ պատմաբանները կփաստեն, որ Ադրբեջան պետությունն առաջին անգամ քաղաքական քարտեզի վրա հայտնվեց 1918 թվականին, երբ ռուսական կայսրությունը փլուզվեց:

Լեռնային Ղարաբաղի խնդրի ներկա փուլը սկիզբ է առել ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին և վերածվել է հակամարտության Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանն ի պատասխան Ադրբեջանի կողմից ուժային քաղաքականություն որդեգրելու արդյունքում:Ղարաբաղի հակամարտությունը տարբերվում է նախկին Խորհրդային Միության տարածքում ծագած այլ հակամարտություններից նրանով, որ Ղարաբաղի ժողովուրդը իրավաբանորեն անթերի կերպով իրացրել է իր ինքնորոշման իրավունքը մինչև Խորհրդային Միության փլուզումը:[9]

Ղարաբաղյան հակամարտությունը հետխորհրդային տարածքի ամենաարյունալի հակամարտությունն է՝ տասնյակ հազարավոր զոհերով, հարյուր հազարավոր փախստականներով և մեծ ավերածություններով:

Ինչպես Շ. Քոչարյանն է գրում իր «Ինչու դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը» հոդվածի մեջ. «1918-1920թթ.Լեռնային Ղարաբաղն ինքնակառավարվող միավոր էր և ուներ պետության բոլոր ատրիբուտները:Այդ ժամանակահատվածում նորաստեղծ Ադրբեջանը տարածքային նկրտումներ ուներ հարևան պետությունների հանդեպ՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղի տարածքը և Ազգերի լիգան

մերժեց Ադրբեջանի անդամության դիմումը նրա սահմանների անհստակության պատճառով:

1920թ. տարածաշրջանի խորհրդայնացումից հետո Ղարաբաղը, հակառակ նրա ժողովրդի կամքին, ինքնավար մարզի կարգավիճակով միացվել էր Ադրբեջանին բոլշևիկյան Կովկասյան բյուրոյի 1921թ. որոշմամբ, որը այդպիսի որոշում կայացնելու լիազորություն չուներ: Ընդ որում,հաջորդ քայլերի արդյունքում ինքնավար մարզն ընդգրկեց Ղարաբաղի տարածքը ոչ ամբողջությամբ , ինչի հետևանքով Լեռնային Ղարաբաղը նաև զրկվեց Հայաստանի հետ ընդհանուր սահմանից:[5;2,3]

ԼՂԻՄ-ի կազմավորումը

Արցախ աշխարհը Հայկական լեռնաշխարհի անբաժանելի մասն է, որը հնագիտության տվյալների համաձայն հին քարեդարյան ժամանակաշրջանից ի վեր եղել է մարդու օրրաններից մեկը և այստեղ կյանքն առանց ընդմիջման շարունակվել է հետագա բոլոր ժամանակաշրջաններում:[1;9]

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո Արցախի հարցի շուրջ վիճաբանությունները նոր ընթացք ստացան:Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի նոյեմբերի 30-ի համատեղ նիստում ընդունվեց մի որոշում , որի մեջ ասված էր.«Ադրբեջանի բանվորգյուղացիական կառավարությունը,ստանալով ապստամբած գյուղացիների անունից Հայաստանը սոցիալիստական խորհրդային հանրապետություն հայտարարելու լուրը, ողջունում է եղբայրական ժողովրդի հաղթանակը: Այսօրվանից Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած սահմանային վեճերը հայտարարվում են վերացած: Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարվում են Հայաստանի Սոցիալիստական հանրապետության մասը»[3;5]

«Այս որոշումը վավերացվեց 1920թ. դեկտեմբերի 1-ին Բաքվի խորհրդի ընդլայլված նիստում ընդունված հռչակագրով»[4;497-498]

Հռչակագիրը ողջունեցին Ի.Ստակինը, Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը և մի շարք այլ պետական գործիչներ:Սակայն Ադրբեջանի հեղկոմի նախարար Ն. Նարիմանովը, որը ստորագրել էր հռչակագիրը և մասնակցել Կովկասյան բյուրոյի պլենիումը լսելով վիճահարույց հարցը, ձայների մեծամասնությամբ վճռում է Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Խորհրդային Հայաստանին,սակայն Նարիմանովը բողոքում է և պահանջում

հարցը տեղափոխել ՌԿ(բ)Կ Կենտկոմ:Հուլիսի 5-ին նորից է ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի նիստ գումարվում, որի ժամանկ կամայականորեն որոշվում է Լեռնային Ղարաբաղը միացնել Ադրբեջանին:

Արցախահայությունը չընդունեց 1921թ. հուլիսի 5-ի ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի ապօրինի որոշումը ր Ադրբեջանական իշխանությունների դեմ քաղաքացիական անհնազդության շարժում սկսեց: Բաքվից մի շարք ներկայացուցիչներ ուղարկվեցին Արցախ, սկսեցին մասսայականնորեն զինել Ղարաբաղի Ադրբեջանի բնակիչներին:Արցախում տեղակայվեցին պատժիչ ջոկատներ: Չնայած դրան՝ արցախահայության կամքը մնաց անկոտրում: Նարիմանովը փորձեց Արցախի հարցը լուծել հայի ձեռքով և Հայաստան ուղարկեց Ադրբեջանի նախարարների տեղակալ և արհմիությունների հանրապետական խորհրդի նախարար Լևոն Միրզոյանին: Վերջինիս հետ միասին ադրբեջանցի գործիչները արցախահայությանը սպառնում են ուժ գործադրել, եթե նրանք չկատարեն Ադրբեջանի պահանջները:

Լևոն Միրզոյանը Արցախի շրջաններում խորհուրդների շրջանային արտահերթ համագումարներ հրավիրեց և փորձեց Ադրբեջանի շահերից բխող որոշումներ կորզել: 1921թ. օգոստոսի 1-ին Հաղորտի գյուղում տեղի ունեցավ Վարանդայի խորհուրդների արտահերթ համագումարումը, որտեղ պատգամավորներից մեկը հաստատեց արցախահայության կամքը՝ միավորվելու մայր Հայաստանի հետ: Այսպիսի դիրքորոշում ուներ նաև Արցախի մյուս շրջանների հայությունը:1921թ. օգոստոսի 8-ին Լևոն Միրզոյանը, գնալով Բաքու, Ադրբեջանին առաջարկում Լեռնային Ղարաբաղին տալ ինքնավարություն: Սրա նպատակը մեկն էր՝ կոտրել Լեռնային Ղարաբաղի հայության ազգային-ազատագրական շարժման թափը: Վերադաս կուսակցական մարմնի որոշումը կատարելու նպատակով Ադրկոմկուսի Քաղբյուրուն և Կազմբյուրոն 1921թ. հուլիսի 20-ին ստեղծում են հանձնաժողով, որը Լեռնային Ղարաբաղի Սահմանադրությունը պետք է մշակեր:

Ադրբեջանի ազգայնամոլ ղեկավարությունը, ստանալով Մոսկվայում նստած մի շարք ազդեցիկ գործիչների աջակցությունը, լուծեց իր հիմնական խնդիրը՝ Լեռնային Ղարաբաղի բռնագրավումը:Սկսվում է լայն քարոզչություն, որպեսզի արցախահայությանը զրկվի ազատ ապրելու վերջին հնարավորությունից:«1921թ. սեպտեմբերի 26-ին Անդրկովկասի քաղբյուրոն

և կազմբյուրոն որոշում են. Խնդրել Կովբյուրոյին՝ վերանայել իր որոշումը Լեռնային Ղարաբաղն առանձնացնելու մասին, այսուհետ ինքնավարություն չհայտարարել»[1;315]

Որպեսզի հիմնավորեն իրենց որոշումը, ստեղծում են հատուկ հանձնաժողով և ուղարկում են Ղարաբաղ՝ նյութեր հավաքելու համար: Այս հանձնաժողովը (Կարաև,Էֆենդիև,Ստուկալով,Միրզոյան)1921թ. հոկտեմբերի 21-ին հրավիրում է Լեռնային Ղարաբաղի պատասխանատու աշխատողների կոնֆերանս, որի մեծամասնությունը մուսուլմաններ էին:Զեկուցումով հանդես է գալիս Կարաևը:«Կոնֆերանսի որոշման մեջ ասված է. Ղարաբաղի աշխատողների կոնֆերանսն աննպատակահարմար է համարում Լեռնային Ղարաբաղի բաժանումն իբրև առանձին ինքնավար մարզի և գտնում է, որ բոլոր միջոցառումները որոնք նշվում են վերը՝բանաձևում, հենց հանդիսանում են ղարաբաղյան հարցի լուծում»[1;315]:

Վերոնշյալ բանաձևում առաջարկվում է գնդակահարել անհնազանդներին, ազգայնական հոգի ունեցող աշխատակիցները պետք է անհետաձգելիորեն դուրս շպրտվեն և փոխարինվեն ինտերնացիոնալիստ աշխատակիցներով:Կոնֆերանսի այս դիրքորոշումը հնարավորություն է տալիս աշխատանքից հեռացնելու հայրենասեր հայերին և նրանց փոխարինել ադրբեջանցիներով կամ Ադրբեջանի կամքը արտահայտող հայ աշխատակիցներով: 1922թ. փետրվարին Թիֆլիսում Անդրկովկասյան կազմակերպությունների առաջին համագումարում Կուլիևը անրադառնում է Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հարցին և նշում, որ Ղարաբաղին պետք չէ ոչ մի ինքնավարություն, պետք է մոռանալ սրա մասին, որպեսզի խաղաղություն լինի և՛ Ղարաբաղում և՛ Անդրկովկասում:

Չնայած այս ամենին՝ արցախահայությունը չի կորցնում հույսը, և շարունակում է պայքարը Հայաստանի հետ միանալու համար:

Լևոն Միրզոյանը համոզվելով, որ իրավիճակը կարող է դուրս գալ վերահսկողությունից, 1921թ. օգոստոսի 8-ին Շուշիից Անդրկոմկուսի Կենտկոմին և Անդրերկրկոմին առաջարկում է Լեռնային Ղարաբաղն առանձնացնել որպես ինքնուրույն վարչական միավոր՝ ենթակա կենտրոնին Ադրժողկոմխորհին և Կենտգործկոմին:

1922թ. աշնանը Ադրբեջանի կառավարությունը նոր արշավ սկսեց արցախահայության նկատմամբ: 1922թ. նոյեմբերին Շուշի են կանչում երկրամասի գյուղական և շրջանային

խորհուրդների նախագահներին: Կարաևը պահանջում է Լեռնային Ղարաբաղը միավորել Ադրբեջանական ԽՍՀ-ին: Սակայն հավաքի մասնակիցներին մեծամասնությունը գտնում է, որ դա նպատակահարմար չէ, Լեռնային Ղարաբաղի աշխատակիցների համար ավելի ցանկալի է մտնել Խորհրդային Հայաստանի կազմի մեջ: Սակայն Կարաևի և Միրզոյանի ճնշումով խորհրդակցությունը որոշում է Արցախը թողնել Ադրբեջանի սահմաններում, որպես ինքնավար մարզ:

Սակայն այս որոշումը վրդովմունքով է ընդունում արցախահայությունը և բողոքի ալիքները մեծանում են:Լեռնային Ղարաբաղի կոմիտեի անդամ Շադունցի նամակը խոսում է արցախահայության վրդովմունքի մասին:Նա գրում է. «Չի կարելի խոսել Ղարաբաղի վերականգման մասին՝ աչք փակելով մի ուրիշ, նրա հարևան ամենահարուստ երկրամասի քայքայվելու նկատմամբ:Զանգեզուրը կապված է Ղարաբաղի հետ,երկուսի հարցն էլ պետք է լուծել միասին»:Շադունցը, շարունակելով իր միտքը, եզրահանգում է. «Ես գտնում եմ, որ ինչպես Ղարաբաղում,այնպես էլ Զանգեզուրում ազգային հարցը ճիշտ լուծելու համար և այդ երկրամասի (Ղարաբաղի և Զանգեզուրի) Տնտեսական վերածննդի համար անհրաժեշտ է Ղարաբաղի լեռնային մասը Զանգեզուրի հետ առանձնացնել իբրև մեկ առանձին ինքնավար միավոր: ...Կոմիտեի նախագծում բերված փաստերը (հայերի ջարդը Շուշիում,Զանգեզուրի կոմունիստական ջոկատի զինաթափումը Շուշիում, լեռնային գոտու շահերը լրիվ արհամարհելը)բավական ակնառու կերպով ասում են, որ այդ երկրամասը թողնել Ադրբեջանի սահմաններում՝այն հարաբերությունների պայմաններում որոնք եղել են մինչև հիմա, չի կարելի:ՈՒստի և,ես գտնում եմ,որ այդ ինքնավար մարզը պետք է կապված լինի անմիջապես Անդրժողկոմխորհի հետ»[1;318-319]

Անգամ Ստալինը,որ հայտնի էր իր հայատյաց տրամադրություններով, նկատելով Ադրբեջանի ղեկավարության հակահայ քաղաքականությունը,1923թ. ապրիլին ՌԿ(բ)կ 12րդ համագումարում նշել է «Ադրբեջանցիների մի մասի շրջանում նույնպես առկա է այսպիսի միտում՝ երբեմն չափազանց անսքող, այն թեմայով, թե մենք, իբր ադրբեջանցիներս բնիկ ենք, իսկ նրանք՝ հայերը երկվոր են: Չի՞ կարելի արդյոք այդ պատճառով նրանց մի քիչ ետ քաշել՝ հաշվի չնստելով նրանց շահերի հետ:Դա նույնպես շովինիզմ է»:Այնուհետև նա համագումարում իր եզրափակիչ խոսքում ասել է.«Ադրբեջանում ադրբեջանցիները՝ որպես մեծամասնություն, ճնշում են հայերին և կոտորում, ինչպես դա եղել է Նախիջևանում, որտեղ

կոտորել են համարյա բոլոր հայերին»:Չնայած այդ ամենին ՝ Ադրբեջանի ղեկավարությունը տարբեր պատճառաբանություններով ձգձգում է Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հռչակումը: Ադրբեջանի ղեկավարության նման դիրքորոշման դեմ բազմաթիվ նամակներ են ուղարկվում Թիֆլիս, Մոսկվա և Երևան «Անդրերկրկոմի Կենտկոմի 1923թ. հունիսի 27-ին տեղի ունեցած պլենումը, լսելով Ղարաբաղի ժամանկավոր կոմիտեի գործունեության մասին Շադունցի և Կարակոզովի զեկուցումները, պահանջում է մեկ ամսվա ժամկետում Լեռնային Ղարաբաղն անջատել՝ իբրև ինքնավար մարզ»[1;320]

1923թ. հուլիսի 1-ին Անդրկոմկուսի Կենտկոմի նախագահությունը հանձնարարում է՝ հռչակել Լեռնային Ղարաբաղը ինքնավար մարզ Խանքենդի կենտրոնով և գործադիր կոմիտեով:Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հեղկոմի նախագահ է նշանակվում Արմենակ Կարակոզովը, իսկ կուսմարզկոմի նախագահ Սերո Մունացյանը:

1923թ. հուլիսի 7-ին Ադրբեջանի կենտգործկոմը ընդունեց հռչակագիր «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի» կազմավորման մասին:Սակայն այս որոշումն էլ ամբողջական չէր, որովհետև ինքնավար մարզի սահմանների հետ էին կապվում Քուրդիստանի դրությունը և ներքին Ղարաբաղի վարչական բաժանումը:

Սահմանները որոշող հանձնաժողովի նախագահ էր նշանակված ադրբեջանցի Կարաևը,անդամներ՝ Կարակոզովը, Սվիրիդովը և Բունիաթազեն: Կարաևը և Բունիաթազեն Քուրդիստանի հարց մեջտեղ քաշեցին, նեղ ու երկար շերտով Արաքսի ափից մինչև փոքր Կովկասյան լեռնաստանի հյուսիսային փեշերը տարածեցին, որ նոր կազմվող մարզը ոչ մի շփման կետ չունենա Հայաստանի հետ:

Շփման կետեր կարող էր ստեղծվել Բերդաձոր-Զաբուղի ձոր-Տեղ-Կոռնիձոր գծով:Կամ Հարար-Պետրոսաշեն-Սպիտակաշեն շերտը, որով Դիզակ-Հադրութ գավառը Հագարի և Որոտան գետակների հովտի վրա անմիջապես կապվում էր Սյունիք-Զանգեզուրի հետ:Հայաստանի և մարզի սահմանակցությունը կարծես թե կար, բայց մարզից անջատեցին հարթավայրային շրջանը և Աղդամ ավանը: Սա դարձրեցին Ադրբեջանական շրջկենտրոն, իսկ Ղարաբաղի լեռնային շրջանի արևմտյան մասը Արաքսի ափից մինչև փոքր Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային փեշերը կտրեցին և ստեղծեցին Քուրդիստանի գավառ՝ սրանով Ղարաբաղը անջատելով Հայաստանից: Այս քայլով Ադրբեջանի ղեկավարությունը Մոսկվայի վերադաս մարմիններին փորձում էր ցույց տալ

հանրապետություն ազգային փոքրամասնության նկատմամբ ունեցած իր «հոգատարությունը»:

Բ.Ուլուբյանը իր «Արցախի պատմություն» գրքում գրել է. «Այսքանից հետո կարելի է եզրակացնել, որ Քուրդիստան կոչվող վարչական-ազգագրական միավորը, Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հետ միաժամանակ հրապարակ նետվելով, ՀՀ-ի ու ԼՂԻՄ-ի սահմանակցությունը խափանելու իր միակ դերը կատարելով՝ աստիճանաբար մարել է, անհետացել ոչ մի կարևոր հետք չթողնելով»:[2;250-251]

Շուտով Ադրբեջանը վերացրեց Քուրդիստանի գավառը և ստեղծեց Քելբաջարի, Լաչինի, Կուբաթլուի և Զանգելանի շրջանները, և կարճ ժամանակում թրքացվեց վերոնշյալ բնակավայրերի գրեթե ամբողջ բնակչությունը:

Մարզից անջատեցին նաև հյուսիսային Արցախը՝ Թալիշի մոտերքից մինչև Ալիարակ լճի (Գյոլ-Գյոլ) հարավային ափերը, նախկին Գյուլիստանի մելիքության մի զգալի մասը, այստեղ գտնվում էին 107 հայկական գյուղեր:Հարևան ադրբեջանական շրջաններին տրվեցին Դիզակի,Վարանդայի և Ջրաբերդի արևելյան մասերի մի շարք գյուղեր: 11,5 հազ. քառ. կմ տարածք և 12 գավառ ունեցող պատմական Արցախին թողնվեց միայն 4,4 հազարը:Այդտեղ էին գտնվում Շուշին և 248 բնակավայր:

Փոքրիկ Ստեփանակերտը մարզի կենտրոն դարձնելը նույնպես պատահական չէր: Դրանով կանխվեց 1920թ. ջարդերից հետո հայության հայրենի քաղաքը վերադառնալու վերջին փափագը:

1923թ. ընդունվեց ԼՂԻՄ-ի կանոնադրությունը, իսկ 1924թ. հուլիսին սահամանդրությունը:

«Այդ փաստաթղթով ԼՂԻՄ-ը դարձավ Ադրբեջանի կցորդը, վերածվեց սովորական գաղութի: Արցախահայությունը կորցրեց իր ինքնուրույնությունը: Այսպիսով խորհրդային կարգերի արշալույսին Ադրբեջանի կողմից սկսվեց հայոց Արցախի ծվատման և վերջնականապես կլանման սանձարցակ քաղաքականությունը, որը նոր արհավիրքներ բերեց Հայոց Արևելից գավառների հայությանը»:[1;321]

Եզրակացնելով, կարող եք նշել, որ նորակազմ հայկական մարզը, որը ըստ հռչակագրի պետք է ընգրկեր Լեռնային Ղարաբաղի հայաբնակ մարզը, անձուկ սահմանների մեջ խեղդվեց: Նրանից անջատվեց ամբողջ հյուսիսային Արցախը՝ նախկին Գյուլիստանի

մելիքությունների տարածքը, Թալիշից մինևչ Ալիարակ լճի հարավային ափերը, Ադրբեջանական գավառներին տրվեցին Դիզակի, Վարանդայի ու Ջրաբերդի արևելյան մասերի մի շարք գյուղեր՝ իրենց բերրի հողատարածքներով:ԵՎ այս տարածքում էլ հակահայկական միջոցառումներ իրականացրին:Իսկ ավանդական կենտրոն Շուշին փոխարինվեց Խանքենդի անշուք ավանով, որը կոչվեց Ստեփանակերտ:

Բոլոր հնարավոր սահմանակցության վայրերում անցկացվեցին անջատման գոտիներ, որպեսզի հետագայում դրանք բնակեցվեն մահմեդականներով և Հայաստանի անջատումը Արցախից դարձնեն անխուսափելի:

1921թ. հուլիսի 4-ին Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Կովկասյան բյուրուն Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում հրավիրում է լիագումար նիստ, որի ընթացքում նույնպես հաստատվում է Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ մաս հանդիսանալու փաստը:Սակայն, Մոսկվայի թելադրանքով և Ստալինի անմիջական միջամտությամբ հուլիսի լույս 5-ի գիշերը վերանայվում է նախորդ օրվա որոշումը և ընդունվում է լեռնային Ղարաբաղը խորհրդային Ադրբեջանի կազմում ընդգրկելու և այդ տարածքում ինքնավար մարզ կազմավարելու վերաբերյալ պարտադրված որոշումը՝ չպահպանելով նույնսիսկ ընթացակարգը: Այս որոշումն աննախադեպ իրավական ակտ է միջազգային իրավունքի պատմության մեջ, երբ երրորդ երկրի կուսակցական մարմինը (ՌԿ(բ)Կ)՝ առանց որևէ իրավական հիմքի կամ իրավասության, որոշում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը:

Ադրբեջանական և Հայաստանի ԽՍՀ-ները 1922թ. դեկտեմբրին ընդգրկվեցին ԽՍՀՄ-ի կազմավորման գործընթացներում, իսկ Ղարաբաղի տարածքի ընդամենը մի հատվածում 1923թ. հուլիսի 7-ին, Ադրբեջանական ԽՍՀ Կենտրոնական գործադիր հեղափոխական կոմիտեի որոշմամբ կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը՝ Ադրբեջանական ԽՍՀ կազմում որով, ըստ էության, ոչ թե լուծվեց, այլ ժամանակավորապես սառեցվեց ղարաբաղյան հիմնախնդիրը: Ավելին, ամեն ինչ արվեց, որպեսզի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն ընդհանուր սահման չունենա Հայաստանի հետ:

Սակայն ողջ խորհրդային ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի հայությունը երբեք չհաշտվեց այդ որոշման հետ և տասնյակ տարիներ շարունակաբար պայքարեց մայր հայրենիքին վերամիավորվելու համար:

Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական ԽՍՀ կազմում լինելու ամբողջ ժամանակահատվածում այդ հանրապետության ղեկավարությունը կանոնավոր և հետևողականորեն ոտնահարել է հայ բնակչության իրավունքներն ու շահերը:Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի կողմից վարվող խտրական քաղաքականությունը դրսևորվում էր մարզի սոցիալ-տնտեսական զարգացման արհեստական կասեցման, ԼՂԻՄ-ի հայաթափման նպատակով ժողովրդագրական գործընթացին ակտիվ միջամտության, հայկական կոթողների և մշակութային արժեքների ոչնչացման ու յուրացման փորձերի մեջ:

Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի խտրականությունն իր ազդեցությունն ունեցավ նաև Ղարաբաղի բնակչության վրա և դարձավ վերջինիս գաղթի հիմնական պատճառը: Արդյունքում, Ղարաբաղի բնակչության հարաբերակցությունը փոփոխվեց. եթե 1923 թվականին հայերը կազմել են Լեռնային Ղարաբաղի բնակչության 94,4 տոկոսը, ապա 1989 թ. տվյալներով հայերի թիվը նվազել է մինչև 76,9 տոկոս: Հայաթափման քաղաքականությունն առավել հաջող ընթացավ մեկ այլ հայկական տարածքում՝ Նախիջևանում:

ԼՂԻՄ-ի ժողովուրդը և Հայկական ԽՍՀ իշխանությունները Ղարաբաղն Ադրբեջանական ԽՍՀ-ին փոխանցելու որոշումը վերանայելու խնդրանքով ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին ուղղված բազմաթիվ դիմումներ են հղել, որոնք անտեսվել են կամ մերժվել, պատճառ դառնալով նախաձեռնողների հանդեպ կիրառվող հալածանքների: Նշված դիմումների թվում են Հայկական ԽՍՀ Կառավարության և կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի 1945թ. դիմումը ԽՍՀՄ կառավարությանը և Համամիութենական կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին, 1963թ. ԼՂԻՄ ազգաբնակչության ավելի քան 2,5 հազար, իսկ 1965թ. ավելի քան 45 հազար ստորագրությամբ նամակները՝ հասցեագրված ԽՍՀՄ ղեկավարությանը, 1977թ. ԽՍՀՄ նոր Սահմանադրության համաժողովրդական քննարկումների շրջանակում ԼՂԻՄ աշխատանքային կոլեկտիվների առաջարկությունները:[7]

Հակամատության ակտիվ փուլի սկիզբը և ԽՍՀՄ-ի փլուզումը

1885թ.-ին Մ.Գորբաչովի հռչակած վերակառուցումը, հրապարակայնությունը նոր հնարավորություն ստեղծեցին Արցախի հիմնախնդրի կարգավորման համար:

Ղարաբաղյան շարժումը նոր թափ ստացավ 1988թ.-ին՝ նպատակ ունենալով վերջ դնել ադրբեջանական բռնատիրությանը, իրացնելու Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

1988թ.-ի փետրվարի 20-ին Ղարաբաղի Ժողովրդական պատգամավորների խորհուրդը ընդունեց որոշում ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու խնդրանքով խորհրդային իշխանություններին դիմելու վերաբերյալ:

Սա անարձագանք չմնաց: Ադրբեջանում էթնիկ զտումների ալիք բարձրացավ:1988թ. փետրվարին Սումգայիթում տասնյակ զոհեր եղան, սրան հաջորդեցին ջարդեր Բաքվում, Կիրովաբադում և ընդգրկեցին այլ քաղաքներ ու գյուղեր:Ընդհանուր առմամբ սպանվեցին հարյուրավոր հայեր, շուրջ 400.000 –ը ստիպված եղան լքել իրենց բնակավայրերը և հաստատվել Հայաստանում և արտերկրում:

1991թ. օգոստոսի 30-ին Խորհրդային Ադրբեջանի անկախության հռչակագրի ընդունումից հետո Լեռնային Ղարաբաղը նախաձեռնեց նույն իրավական գործընթացը՝ ընդունելով սեփական անկախության հռչակագիրը:

Իսկ արդեն 1991թ.-ի դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղում անցկացվեց հանրաքվե, որի ընթացքում բնակչության ավելի քան 99%-ը քվեարկեց անկախության օգտին:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը և միջազգային իրավունքը

Տարիների ընթացքում Եվրոպական խորհրդարանն ընդունել է մի շարք բանաձևեր՝ իր աջակցությունը հայտնելով Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման պայքարին: 1999 թվականի հունիսի 21-ի բանաձևում շեշտվում է, որ «1991թ.-ի Լեռվային Ղարաբաղի Ինքնավար Մարզն իր անկախությունը հռչակել է՝ հետևելով ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին հորհրդային սոցիալիստական հանրապետությունների կողմից արված նմանատիպ հայտարարություններին»

Անտեսելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, չունենալով Լեռնային Ղարաբաղի անկախության դեմ որևէ հակափաստարկ՝ Բաքուն փորձեց խնդիրը ներկայացնել որպես Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճ, ավելին, սպառնալիք Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը: :[8]

Միավորված ազգերի կազմակերպությունը ևս անդրադարձել է Ղարաբաղյան հիմնախնդրին:Առաջին անդրադարձը տեղի է ունեցել դեռևս մինչև ԽՍՀՄ –ի փլուզումը: 1991թվականի մարտի 5-ին ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովում քննարկվել է ԼՂԻՄ-ում տիրող իրավիճակը և նշվել, որ Արցախում ոտնահարվում են հայ բնակչության ազատությունները, նրա ինքնորոշման իրավունքը: ՄԱԿ- ի Անվտանգության խորհուրդը 1993 թվականին Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ընդունել է չորս բանաձև՝822,853,874,884:[6;102] Այս բանաձևերի նշանակությունը շատ մեծ է:

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքը՝ կարելի է եզրակացնել, որ Արցախյան հակամարտության մասին եղած գրականության բազմակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս համակողմանիորեն պատկերացնել հիմնախնդիրը, հետազոտել, փնտրել, լուծումներ առաջադրել և ցուցաբերել քննադատական մոտեցում, ցանկացած թեմա պետք է ուսումնասիրել տարբեր տեսանկյունից, ինչը կնպաստի սովորողների խոր և համակողմանի գիտելիքների ձեռքբերմանը:

Ուսումնասիրելով Արցախի հարցը նախախորհրդային և խորհրդային տարիներին՝ մեկ անգամ ևս փաստեցինք, որ Արցախի ժողովրդի նկատմամբ տեղի է ունեցել պատմական անարդարություն՝ Արցախը բռնակցվել է Խորհրդային Ադրբեջանին և տասնամյակներ շարունակ արցախցին ենթարկվել է բռնաճնշումների:

Հակամարտության թևակոխումը ակտիվ փուլ և ապա ԽՍՀՄ –ի փլուզումը, ցավոք, ոչինչ չփոխեցին արցախահայերի կյանքում: Հակամարտությունը մնաց չլուծված:

Արցախյան հարցը արդի փուլում միտված է տարածքային հակամարտությունից վերածվել միջազգային կոնֆլիկտի, եթե հարցը չլուծվի դիվանագիտական ճանապարհով:

Հետազոտական աշխատանքում Ղարաբաղյան հակամարտությունը դիտարկվեց միջազգային իրավունքի տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման սկզբունքների տեսանկյունից: Ելնելով վերոբերյալից՝ եզրակացրինք, որ գործ ունենք բացառապես ազգերի ինքնորոշման սկզբունքի հետ, իսկ տարածքային ամբողջականության սկզբունքը խախտվում է այն ժամանակ, երբ մեկ պետությունը գրավում է մեկ այլ պետության տարածք:

Ես լիահույս եմ , որ ազգային ու համամարդկային խնդիրներին իրազեկ, կշռադատող, հուզական հասունություն դրսևորող, ակտիվ ու պատասխանատու քաղաքացին վաղը կոնֆլիկտները կհաղթահարի նորովի կամ, առհասարակ, զերծ կմնա դրանցից:Նոր սերունդը պատմությունից դասեր կքաղի, չի կրկնի անցյալի սխալները և չի բախվի այն ցավոտ հիմնախնդիրներին, որոնց բախվում ենք այսօր:

Գրականության ցանկ

1.Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը,Եր., 2002թ. 407էջ:

2.Ուլուբաբյան Բ.,Արցախի պատմություն, Եր.,1994թ. 378էջ:

3.«Կոմունիստ»(Երևան),7 դեկտեմբերի, 1920թ.:

4. «Կոմունիստ», 2 դեկտեմբերի, 1921,Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ Հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում,Ժողովածու, Եր., 1957:

5.Քոչարյան Շ., Ինչու դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի Հակամարտությունը, Երևան, 2015 35 էջ:

6.Մեթոդական ձեռնարկ, Հասարակագիտություն,Կոնրադ ԱդենաուերՀիմնադրամ, Եր.2020, 192էջ:

7. https://www.mfa.am/hy/nagorno-karabakh-issue/

8. https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2015/02/06/min-fr-polint-art/4781

9.https://www.mfa.am/filemanager/Statics/Article_nkr_arm.pdf /